

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	42
Հ. Յ. Թորոսեան. - Կորիւն եւ իր գործը	145
Հ. Եսայի Գառլեան. - Փորձերն ախարհական ժողովը	153
Յովհ. Արքեպ. Նազիւան. - Երանելի Տէր Կոմիտաս քահանայի եւ նահատակի մարմնոյն հարցը	164
ԳՐԱԿԱՆ	
Հ. Ղ. Ալիշան. - Քաջաղբով Մուշեղը	
Զիրարի ճակատամարտին մէջ. Թրդ. Հ. Վ. Յ.	170
Հ. Ա. Բ. - Անշմար ծաղիկներ	171
ՕՐՈՒԱՆ ԳՐԲԵՐ - ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
Հ. Եղիա փէշիկեան. - «Ղեւտական գրքի շղթայ մը՝ կորսուած իր յոյն բնագրին մէջ եւ մեզի հասած հայերէն թարգմանութիւնը... եւն.» Ուս. Աւստ. Մանուկ	173
Հրաչ Գալստեան. - «Ուստի» տարեգիրքը կեդարեւեան եւ գիտութեան. տպ. Կ. Պ. 1939	176
ՆՇԽԱՐՆԵՐ ՄԵՐ ԱՆՄԱՀՆԵՐԷՆ	
Դանիէլ Վարուժան. - Վան Արթուրեան արձանին (Փրանսերէն)	171
ԳԻՏԱԿԱՆ	
Բժ. Իգնատիոս Գիւլիկեան. - Թոքախոր եւ արդի պայքարը անոր դէմ	181
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
Ամսվերջի հանդէսներ Միքայելեան վարժարաններուն մէջ	
Խմբ. - Մուրատ-Ռաֆայէլեան - Վենետիկ	184
Հ. Մ. Ճանաչեան. - Մուրատեան վարժարան - Սեւր (Փարիզ)	188
Հայկայցի. - Միքիթեան վարժարան Հալէպ	192

ACADEMIE ARMENIENNE - PHILOLOGIE	P.
P. J. Torossian. - Koriun et son oeuvre	145
P. Isaïe Krouzian. - Le concile œcuménique de Florence	153
Mgr. Jean Nazlian. - La question des reliques du bienheureux Gomidas, prêtre martyr	164
LITTERATURE	
P. L. Alichan. - Le vaillant Mouchegh dans la bataille de Dzirave (trad. par P. V. H.)	170
P. A. K. - Fleurs inaperçues	171
LIVRES DU JOUR - RECENSIONS	
P. E. Païtchikian. - «Di una vetusta catena sul Levitico, perduta in greco e conservata in armeno, della sua stretta relazione col commentario di Procopio di Gaza, e dei tre codici di S. Lazzaro, che la contengono» (Almo Zanolli)	173
Hrutch Katcharentz. - «Oasis» almanach de beaux arts et de science	176
DES BRIBES DE NOS IMMORTELS	
Daniel Varoujan. - A la statue de Van Artévelde	171
SCIENCE	
Doct. Ignace Kiuciukian. - La phtisie et le combat contre elle	181
ECHOS ARMENIENS	
Fêtes de fin d'année dans les Collèges des PP. Mékhitharistes	
Réd. - Au Collège «Moorat-Raphaël» de Venise	184
P. M. Djanachian. - Au Collège «Moorat» de Sèvres (Paris)	188
Alepin. - Au Collège Mékhithariste d'Alep	192

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Կը խնդրենք մեր ազնիւ բաժանորդներէն որ բարեհաճին փութով կարգադրել խմբագրութեան հետ իրենց հին ու նոր հաշիւները:

ԽՄԲ.

1843-1939

ԲԱՋՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՑԱԿԱՆ

ՅՈՒՆԻՍ - ՅՈՒԼԻՍ ԹԻՒ 6-7

ՀԱՏ. ՂԷ ՌԵԶԸ-ՌԵԶԸ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

ԿՈՐԻՒՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ

(ՇԱՐ. ՏԵՄ «ԲԱՋՄԱՎԷՊ» 1939, էջ 100)

Մեր հինգերորդ դարու առաջին կիսուն, երբ Հայաստան՝ ծաղկած ու բարգաւաճ գրականօրէն՝ կը թուէր իր բարձրագոյն փառքին դադարը հասնիլ, շնորհիւ մեր երկու Ս. Հարց հսկայ ճիւղերուն, անդին՝ քաղաքական կնճռոտ բարդութեանց հեռանկարով՝ այնպիսի ողբալի ու ծանր դէպքեր տեղի ունեցան, որոնց արձագանքը տակաւին՝ իր 1500 տարիներ վերջը՝ կը ցնցէ ու կը խոցէ մեր հոգիները: Եւ կը ցնցէ ու կը խոցէ մեր հոգիները: Եւ կը ցնցէ ու կը խոցէ մեր հոգիները՝ որ գիտենք, այդ դէպքերը Կորիւնէն չէ՛ որ գիտենք, ուսկից չէր պահանջուեր՝ որ ողբերու թրթուած մը հիւսէր մեզի, այլ գոնէ թրթուած մը տխուր շեշտով քանի մը տողերու մէջ պատկերացնէր մեր թշուառ հայրենիքին խղճալի վիճակը, իր արքունի դահն ու թաղը կորսնցուցած, ինչպէս նաեւ մեր ալիքի մնացած կեղեցիկն՝ իր սիրելի Հոր-այրի մնացած կեղեցիկն՝ իր սիրելի Հոր-մէն զրկուած: Ո՛չ. Կորիւն տող մ'անգամ չի նուիրեր այդ երկու սրտաճմլիկ անցքերուն. Փարսեցիքն ու Խորենացիքն են՝ որ հասուցեր են մեզի այդ յուզիչ տեսարանին մոռալ պատկերը: Դիտելի է դարձեալ, որ Կորեան գրութիւնը չի գոհացներ լրիւ մեր

սրտին օրինաւոր պահանջը, որով պիտի փափաղէինք գիտնալ ո՛չ միայն Մաշթոց վարդապետին Վարքն ու գործերը, անոր հոգւոյն ու մտքին գերազանց ձիրքերը, այլ նաեւ անոր սրտին խոր տպաւորութիւնները եւ յուզումները՝ հայ ազգին կրած կրօնական ու քաղաքական յաջող կամ ձախող անցքերուն առթիւ: Մաշթոց՝ լոկ ո՛ր եւ է Վարդապետ մը չէր, իր բարձր առաքելութեան միայն նուիրուած, որ անհոգ ու անփոյթ ըլլար իր ազգին ու հայրենիքին կրածներուն, ու անգալ՝ անոնց սպառնացող վտանգներուն: Ան՝ ճշմարիտ հայր մ'էր ազգին, աջակից մը ու սրտակից մը մեր հոգեւոր Պետին, խորհրդատու մը մեր թագաւորներուն, նախանձայոյց վրէժխնդիր մը՝ ո՛չ միայն մեր հաւատքին սրբութեան ու բարձրութեան, այլ ո՛չ նուազ նաեւ մեր հայրենիքին փառքին ու ազատութեան, որով անոր ազամանդիկ սիրտը՝ առանց ընկճուելու կամ թուլանալու երբեք՝ կ'ազդուէր անհունօրէն ո՛ր եւ է ուրախալի կամ աղետալի դէպքերէ: Եւ այս բոլորը ի դու՛ր է փնտռել